ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 32.2 Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի և կերակրողին կորցնելու դեպքում նշանակված նպաստների ինդեքսավորումը**

Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափերը ինդեքսավորվում են յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ ոչ պակաս, քան բազային տարվա փետրվար ամսվա դրությամբ սպառողական գների ինդեքսի՝ բազային տարվան նախորդող տարվա փետրվար ամսվա նկատմամբ տոկոսային փոփոխության (աճի) չափով: